

- Մայրաքաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման ընթացքում **2018**թ. հունվարի **1**-ից մարտի **26**-ն ընկած ժամանակահատվածում փոխարինվել է **10642** լամպ, որից **8898**-ը` բակերում և փողոցներում, իսկ **1744**-ը` այգիներում և անցումներում, **20** հենասյուն, **66** կմ տարբեր կտրվածքի մալուխներ և հաղորդալարեր:
- **2018**թ. հունվարի **1**-ից մարտի **26**-ն ընկած ժամանակահատվածում կառուցվել և Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցին է միացվել **9** օբյեկտ, որից` **7** փողոց և փողոցի հատված, **1** բակային տարածք և **1** կամարանցում, տեղադրվել են **17** հենասյուն, **25** բարձակ և **57** լուսատու: Նորակառույց ցանցի երկարությունը կազմում է **2** կմ:
- Արտաքին լուսավորության ցանցում կատարվել է սխեմայի փոփոխություն, **10** հրապարակներ և **55** խաչմերուկներ լուսավորվում են երկարացված ռեժիմով: